# ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

### Որո՞նք են համապատասխանության պահանջները:

Կալիֆորնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագրին՝ CLCA-ին (California's Low Cost Auto Insurance Program) համապատասխանելու համար դիմորդները պետք է.

- ունենան Կալիֆորնիայի վավեր վարորդական իրավունք,
- ունենան $25,000 կամ ավելի ցածր արժեքով ավտոմեքենա,
- բավարարեն եկամուտի չափանիշները,
- լինեն առնվազն 16 տարեկան (*18-ից ցածր դիմորդները պետք է իրավաբանորեն անկախ լինեն),
- ունենան դրական վարորդական պատմություն:

### Ի՞նչ եկամուտ է պահանջվում:

Ընտանիքի եկամուտի նկատմամբ պահանջները.

- 1 անձ - $39,125.00
- 2 անձ - $52,875.00
- 3 անձ - $66,625.00
- 4 անձ - $80,375.00
- 5 անձ - $94,125.00

«Ընտանիք» հասկացությունը ներառում է դաշնային կամ նահանգային հարկային ձևաթղթում նշվող բոլոր անձանց:

### Ես պե՞տք է եկամուտի ապացույց ներկայացնեմ դիմելու համար:

Այո: Ծրագրի համար որպես ընտանիքի եկամուտի ապացույց ընդունելի են հետևյալ փաստաթղթերը.

| Ծրագիրը | Պահանջվող փաստաթղթերը |
|---|---|
| **CalFresh (սննդի դրոշմանիշեր)** | Ֆինանսական օգնության Էլեկտրոնային փոխանցման (EBT - Electronic Benefit Transfer) քարտ |
| **CalWorks (նպաստ)** | Ծանուցման նամակ |
| **California LifeLine** | Կոմունալ ծառայությունների ընկերության հավաստագիր Lifeline-ին Ձեր մասնակցության մասին |
| **LIHEAP (ցածր եկամուտով տնային տնտեսություններին Էներգետիկ աջակցություն)** | LIHEAP-ի (ցածր եկամուտ ունեցողներին Էներգետիկ աջակցություն) հավաստագիր |
| **Medi-Cal / Medicaid** | Medi-Cal քարտ |
| **Կալիֆորնիա նահանգի զբաղվածության զարգացման վարչության (EDD - Employment Development Department) դեբետային** | EDD-ի դեբետային քարտ կամ ֆինանսական օգնության հատկացման նամակ |

| Ծրագիրը | Պահանջվող փաստաթղթերը |
|---|---|
| **քարտ կամ ֆինանսական օգնության նամակներ** | |
| **SSI (տարեց, կույր, հաշմանդամ)** | SSI-ի հավաստագիր |
| **Սոցիալական ապահովության վճար կամ կենսաթոշակ** | Սոցիալական ապահովության վճարի կամ կենսաթոշակի հատկացման նամակ |
| **Եկամուտի մակարդակը *** | • դաշնային կամ նահանգային եկամտահարկի հայտարարագիր<br>• W-2 ձև<br>• 1099 ձև<br>• աշխատավարձի կտրոն |

### Որո՞նք են դիմելու գործողությունները:

«Apply Online» («Դիմել առցանց») կոճակն ընտրելուց հետո Դուք պետք է համապատասխանության հարցաթերթիկ լրացնեք: Հարցաթերթիկը լրացնելուց հետո Ձեզ կհարցնեն, թե ցանկանում եք լրացնել դիմումի արա՞գ, թե՞ լրիվ ձևը: Դիմումը լրացնելուց հետո խնդրում ենք սպասել 24-ից 48 ժամ, որպեսզի միջնորդը (Pacific Preferred Insurance) կապվի Ձեզ հետ: Այդ ընթացքում միջնորդը կստուգի Ձեր դիմումը: Դիմումի ստուգումից հետո միջնորդը կկապվի Ձեզ հետ, որպեսզի տրամադրեք եկամուտի ապացույցի և ավտոմեքենայի սեփականության ապացույցի պատճենները: Միջնորդի կողմից այդ տեղեկությունների հավաստման պես դիմումի ներկայացման գործընթացը կավարտվի: Այնուհետև ապահովագրված անձին կտրամադրվի ժամանակավոր ապահովագրության քարտ:

### Ի՞նչ ծածկույթ է ապահովում Կալիֆորնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագիրը:

Ծրագիրն ապահովում է երրորդ կողմի վնասի մատչելի ապահովագրություն, որը բավարարում է ֆինանսական պատասխանատվության մասին նահանգային օրենքների պահանջները:

Պատասխանատվության ապահովագրություն հիմնական վկայագրի սահմանաչափերն են.

- $10,000 մեկ անձի համար՝ մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում
- $20,000 մեկ պատահարի համար՝ մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում
- $3,000 գույքային վնասի փոխհատուցում մեկ պատահարի համար

Դիմորդները լրացուցիչ վճարի դիմաց կարող են ավելացնել.

- $1,000 բժշկական ծախսերի հատուցում
- $10,000 մեկ անձի համար՝ չապահովագրված անձի կողմից հասցված մարմնական վնասվածքի դեպքում

- $20,000 մեկ պատահարի համար՝ չապահովագրված անձի կողմից հասցված մարմնական վնասվածքի դեպքում

Ծրագիրը չի նախատեսում համապարփակ կամ բախումից ապահովագրություն (ապահովագրական ծածկույթ, որը թույլ է տալիս պատահարից հետո վերանորոգել վարորդի ավտոմեքենան):

## Ի՞նչ արժե CLCA-ի վկայագիրը:

Կալիֆորնիայում տարեկան ապահովագրավճարները կախված են տվյալ մարզից և կազմում են $232-ից $966: Գործում են զեղչեր, եթե դիմորդն ունի վարորդական վկայականով վարման 3-ամյա դրական պատմություն:

Դրական վարորդական պատմություն է համարվում հետևյալը.

- վերջին երեք տարվա ընթացքում ոչ ավելի, քան մեկ իր մեղքով տեղի ունեցած, նյութական վնասի ելքով պատահար կամ ոչ ավելի, քան մեկ տուգանային միավոր երթևեկության կանոնների խախտման համար,
- վերջին երեք տարվա ընթացքում ոչ մի իր մեղքով տեղի ունեցած, մարմնական վնասվածքի կամ մահվան ելքով պատահար,
- վարորդական պատմության մեջ «Vehicle Code» օրենսգրքով նախատեսված հանցանքի կամ իրավախախտման համար դատվածության բացակայություն:

Արժեքներն ըստ մարզի ճշտելու կամ վճարման* ժամանակացույց հաշվարկելու համար այցելեք այստեղ և օգտվեք արժեքի հաշվիչից:

*CLCA-ն առաջարկում է վճարման երկու տարբերակ.

- Լրիվ վճարում **կամ**
- 20% կանխավճար, այնուհետև 7 տարաժամկետ վճարում (յուրաքանչյուր վճարման համար գանձվում է $4.00 միջնորդավճար):

## Ինչպե՞ս դիմել ծրագրին մասնակցելու համար:

Կալիֆորնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագրին մասնակցելու դիմում ներկայացնելու համար կատարեք հետևյալ 2 գործողությունները.

1. Լրացրեք համապատասխանության հարցաթերթիկը:
2. Այնուհետև ավարտեք դիմելու գործընթացը.
    - տեղում՝ 100% առցանց
    - ԿԱՄ տեղական գործակալի հետ անվճար հանդիպման միջոցով:

Այցելեք mylowcostauto.com և ընտրեք «Get Started»»(«Սկսել») կոճակը:
Եթե ինտերնետը հասանելի չէ, կամ լրացուցիչ օգնություն է անհրաժեշտ, զանգահարեք 1-866-602-8861:

## Ինչպե՞ս դիմել առցանց:

Առցանց դիմելու համար այցելեք mylowcostauto.com և ընտրեք «Get Started» («Սկսել») կոճակը՝ ծրագրին համապատասխանության վերաբերյալ հակիրճ հարցում անցնելու

համար: Համապատասխան համարվելու դեպքում մուտքագրեք Ձեր ZIP ծածկագիրը և ընտրեք «Apply Online» («Դիմել առցանց») կոճակը:

### Ի՞նչ պատժամիջոցներ են նախատեսված ավտոապահովագրություն չունենալու համար:

Եթե երթևեկության կանոնների խախտման կամ պատահարի դեպքում արձանագրվի, որ ավտոապահովագրություն չունեք, կենթարկվեք տուգանքի և, հնարավոր է, որ նաև առկախվի ավտոմեքենայի գրանցումը:

Ավտոապահովագրություն չունենալու համար նախատեսված պատժամիջոցների մասին այլ տեղեկությունների համար այցելեք Կալիֆորնիայի փոխադրամիջոցների դեպարտամենտի (California DMV) կայքը:

### Քանի՞ ավտոմեքենա կարող է ներառվել CLCA-ի վկայագրում?

Պահանջները բավարարող յուրաքանչյուր դիմորդ կարող է ծրագրի պայմանների համաձայն ունենալ մինչև երկու Ցածրարժեք ապահովագրության վկայագիր: Փաստորեն, Ձեր՝ որպես դիմորդի, անունով գրանցված բոլոր, առավելագույնը 2, ավտոմեքենաները* պետք է ներգրավված լինեն CLCA ծրագրում:

* Բացառությամբ մոտոցիկլերի և առևտրային փոխադրամիջոցների:

### Ինչո՞ւ պիտի իմ բոլոր ավտոմեքենաները ներգրավվեն CLCA-ում:

Ծրագիրը պահանջում է, որ դիմորդի բոլոր ավտոմեքենաներն ապահովագրվեն ծրագրի շրջանակներում: Ըստ այդ, ծրագրով մեկ մեքենա ապահովագրելու պահանջները բավարարելու համար դիմորդները չպետք է մյուս մեքենաների համար որևէ այլ վկայագրով ապահովագրական ծածկույթ ունենան:

### Ես կարո՞ղ եմ CLCA-ի վկայագրով ապահովագրական ծածկույթ ստանալ, եթե ավտոմեքենայի վարկ ունեմ:

Այո, սակայն պետք է Ձեր վարկատուի հետ ճշտեք, թե արդյո՞ք ծրագրով նախատեսված ծածկույթի սահմանաչափերը համապատասխանում են Ձեր վարկի պայմաններին:

### Ես Ցածրարժեք ապահովագրության վկայագիր ունեմ: Ինչպե՞ս կապվեմ իմ ապահովագրական ընկերության հետ կամ վճարում կատարեմ:

**Ընկերությունների կոնտակտային և վճարային տվյալները**

**CAARP Insurance Agency (AAP-ով սկսվող վկայագրեր)**

Հաճախորդների սպասարկում՝ 888-922-4776 | Էլ. փոստ՝ CALC@aipso.com

Հեռախոսով վճարում՝ 866-470-5504

Էլեկտրոնային վճարումներ՝ https://pay.caauto.online

Հուշումներ օգտատերերի համար. Վկայագրի համարը մուտքագրեք ՄԻԱՅՆ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (օրինակ՝ CAR): Համակարգը փոքրատառեր չի ընդունում:

Ծննդյան թիվը մուտքագրեք հետևյալ ձևաչափով՝ MMDDYYY (ԱմիսՕրՏարի, օրինակ՝ 01012025): Գծիկներ կամ այլ տարանջատող նիշեր օգտագործել չի կարելի:

Վճարում փոստով
Չեկում որպես ստացող նշեք CAARP-ը և փոստով ուղարկեք հետևյալ հասցեով.
CAARP
PO Box 6530
Providence, RI 02940-6530
---

**Integon National Insurance Company (IMPLC-ով սկսվող վկայագրեր)**

Հաճախորդների սպասարկում՝ 800-632-3306 | Էլ. փոստ՝ UNDNYBP@NGIC.COM

Հեռախոսով վճարում՝ 866-470-5520

Էլեկտրոնային վճարումներ՝ https://pay.caauto.online

Հուշումներ օգտատերերի համար. Վկայագրի համարը մուտքագրեք ՄԻԱՅՆ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (օրինակ՝ CAR): Համակարգը փոքրատառեր չի ընդունում:

Integon National ընկերության հաճախորդները վկայագրի համարի վերջում պետք է հավելեն «ալֆա» նիշը: Օրինակ՝ IMPLC123456A

Ծննդյան թիվը մուտքագրեք հետևյալ ձևաչափով՝ MMDDYYY (ԱմիսՕրՏարի, օրինակ՝ 01012025): Գծիկներ կամ այլ տարանջատող նիշեր օգտագործել չի կարելի:

Վճարում փոստով
Չեկում որպես ստացող նշեք Integon National Insurance Company-ն և փոստով ուղարկեք հետևյալ հասցեով.
Integon National Insurance Company
PO Box 9048
Bethpage, NY 11714
---

**21st Century Centennial Insurance Company (CAR-ով սկսվող վկայագրեր)**

Հաճախորդների սպասարկում՝ 800-531-5981 | Էլ. փոստ՝ FAR@farmersinsurance.com

Հեռախոսով վճարում՝ 833-516-4460

Էլեկտրոնային վճարումներ՝ https://pay.caauto.online

Հուշումներ օգտատերերի համար. Վկայագրի համարը մուտքագրեք ՄԻԱՅՆ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (օրինակ՝ CAR): Համակարգը փոքրատառեր չի ընդունում:

Ծննդյան թիվը մուտքագրեք հետևյալ ձևաչափով՝ MMDDYYY (ԱմիսՕրՏարի, օրինակ՝ 01012025): Գծիկներ կամ այլ տարանջատող նիշեր օգտագործել չի կարելի:

Վճարում փոստով
Չեկում որպես ստացող նշեք 21st Century Ins.-ը և փոստով ուղարկեք հետևյալ հասցեով.
Auto Ins. Plan Payment Center
P.O. Box 7247-0243
Philadelphia, PA 19170-0243

## Ի՞նչ է AIPSO-ն:

AIPSO-ն կառավարող կազմակերպություն է և ծառայություններ է մատուցում ապահովագրական ոլորտի տարբեր ընկերություններին, որոնք պատասխանատու են ավտոմոբիլային ապահովագրության մնացորդային շուկայի տնօրինման համար: Մնացորդային շուկան հայտնի է որպես այն անձանց «վերջին հույսի շուկա», որոնք անկարող են ավտոապահովագրություն ձեռք բերել կամավոր շուկայում: AIPSO-ն նաև Ապահովագրության դեպարտամենտի անունից կառավարում է Կալիֆորնիայի ցածրարժեք ավտոապահովագրության ծրագիրը: